



ՄԱՐԺԱՐԵՐ

ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՄԱՐԺ 10 ՅՈՒՆՈՒՍԱՐ 1887

ԹԻԻ 3855

ԱՂԳ

Բաւական ժամանակէ իւր Մաթի շա-
բաթաթերթը ըստ բաւականին չէր խնա-
մուած :

Արեւելի վարչական խորհուրդն յանձ-
նեց Մաթի խմբագրութեան հոգն իւր ան-
դամներէն Արիւար Էֆ. Արիւարեանի :

Մաթի պիտի նկատուի ազատ բեմ մը
ուստից պիտի կրնան ըստ իւր ազգային ամէն
կարգի խնդրոց վրայ տարբեր տարբեր
տեսութիւններն :

ՎԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ «ԱՐԵՒԵԼԻ»

ՊՕՐՈՒՆԱԿՈՒԹԻՆ

ԳՐ. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ	Դ. Գ. Կարապետ
ՀՐԱՋԴԱՆ	Հայ Կինը
ՊՈԼԻՏԵՕ	Օրուան Կեանքը
	Քաղաքական
	Արձագանք
	Արարատեան Սուր-
	հանդակ
	Իզմիլիէն Լուրեր
Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ	Դերասանուհին
	Ծանուցմունք

ՍԱՍԻՍ

Կը պարունակէ ութ երես , վերջին երեսը
յատկացեալ է ծանուցմանց :

Այս անգամ քաջառարար պարունակու-
թեանը աւելի է :

ՍԱՍԻՍ

Կը հրատարակուի Կ. Պոլիս , Շաբաթ օր ,
Հատը 40 փարս :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիս , տարեկան Կէս ասկի օսմ.
» վեցամսեայ Բազ. »
Կաւառները 70 դահեկան մէծիւ .
Արտասահման , 15 Փռանգ :

Դրամը խրկել :

Առ մատակարարութիւն

Արեւելի և Մաթի :

Հասցէ

Ղալաթիա , Կորատունիկեան - խան
Կոստանդնուպոլիս

ՍԱՍԻՍԻ ԸՆԹԵՐՑՈՂԱՅ

Կամ հաճելի մի բան երբեք պիտի չըսես ,
եւ կամ յիմարդ պիտի յաւէտ ճաղկենքդքդ :

ՊՕՄԱՐԵՆ (Թարգմ. Ա. Գ. ՓնՍ.)

Կ'ընտրեմ ճաղկուիլ :

Ա. Ա.

Կ.ՈՅԱՆԴՆՈՒՆ ՊՈԼԻՍ, ՈՒՐԵԱՐ 9 ՅՈՒՆՈՒՍԱՐ

ԱՂԳԱՅԻՆ

Այս շաբաթ ծանուցուեցաւ թէ՛ Միւր-
տիչ Էֆէնտի Սարբեան , Միացեալ-Ընկե-
րութեանց Հայաստանի վարժարաններու
Ընդհանուր Տեսուչ , ձերբակալուած է ի
Մուշ եւ փոխադրուած ի Կարին , ուր կը
հարցաքննուի : Արդէն մի քանի օր առաջ
ձերբակալուած էր Մարկոս Էֆէնտի Նա-
թանեան , փոխ-տեսուչ նոյն ընկերութեանց
վարժարաններու :

Տարակոյս չկայ թէ՛ ձերբակալեալները
պիտի արդարանան Տաղ տարի է որ Մի-
ացեալ-Ընկերութիւնը դպրոց ունին Հա-
յաստանի եւ Կիլիկիոյ մէջ , եւ այս երկար
ժամանակամիջոցին կառավարութեան պաշ-
տօնէից կողմանէ երբեք ոչ մի գանդատ
լուծեցաւ Ընկերութեան ո եւ է վարժապե-
տին կամ պաշտօնէին դէմ : Եւ սակայն ինչ
տարիներ եղան այս տասը տարիներն , որ-
պիսի դէպքեր պատահեցան . ամէն ոք կը
յիշէ զայն : Ինչո՞ւ ոչ մի գաւառէ , ոչ մի
քաղաքէ եւ ոչ մի գիւղէ չլուծեցաւ ամե-
նափոքրիկ գանդատ մը ընդդէմ Միացեալ-
Ընկերութեանց պաշտօնէից : Վասն զի այդ
պաշտօնեայններն ուրիշ բան չէին ըներ —
ու չպիտի ըներ — քայց եթէ աշխատիլ
նախնական կրթութեան ծաւալման Կեդ-
րոնէն իրենց ընդունած հրամանն է չմիջա-
մտել մինչեւ իսկ ոչ մի ազգային գործի ,
ոչ մի առաջնորդական խնդրոց :

Այս իմաստուն ուղղութեամբ ընթանա-
լով Միացեալ-Ընկերութիւնը սէր եւ հա-
մակարանք գտած են ոչ միայն ընդհանուր
ազգէն , այլ և Պետութիւնէն : Ամէն ուրեք
եւ ամէն տեսն Կառավարութեան պաշտօն-
եայք իրենց պաշտպանութիւնն ու խնամքը
նուիրած են այս Ընկերութեանց պաշտօ-
նէից , աշակերտաց ու դպրոցաց , եւ ի Պո-
լիս Նախարարք , Եսարդոսք իրենց հովանին
չնորհած են այն ամէն ձեռնարկներու որք
կէտ նպատակի ունին օժանդակել Մի-
ացեալ-Ընկերութեանց զարգացման :

Աչքի առաջ ունենալով այս պարագայ-
ներն ազգը կը յուսայ թէ՛ Պատրիարքն ու
Քաղաքական Ժողովը պիտի փութան հարկ
եղած բացատրութիւններն ու տեղեկու-
թիւնները տալ ուր որ անկ է : Կարելի չէ
ենթադրել որ Միացեալ-Ընկերութեանց

պաշտօնեայններն կատարած անոց ենթարկուին
Տ. Յարութիւն Պատրիարքի եւ արդի վար-
չութեան օրով , մինչ նոցա նախորդներու
ժամանակ — ներկայէս չա՞տ տարբեր ժա-
մանակ — այդպիսի կատարած մը բնաւ տեղի
չունեցաւ :

ՀԱՅ ԿԻՆԸ

Իգական սեռի դաստիարակութեան
հարցը մին է ազգային օրուան կարեւ-
որ խնդիրներէն եւ հաւանօրէն 1887
տարւոյ մէջ ազգային մտածութեան
գլխաւոր առարկայներէն մին լինի , եթէ
քիչ չա՞տ ողջամիտ լինինք , — ինչ որ հա-
ւանականութիւնէ բոլորովին զուրկ չէ :
Օգտակար կը համարենք ուրեմն աստ
հրատարակել այդ խնդրոյն վրայ մի
բանախօսութիւն զոր Պ. Գր. Նիկողոս-
եան խօսած է ազգային հանդիսի մը
մէջ :

Այդ հանդիսին ատենաբան մը խօ-
ղելով նախնի հայոց տգիտութեան մա-
սին , յայտարարած է , ըստ սովորութեան
թէ՛ տգիտութիւնը մեծ չարիքներ հա-
տուցած է մեր հարց եւ թէ՛ կործան-
ուած են Անի եւ ուրիշ քաղաքներ առ
ի չգոյէ դպրոցներու : Պ. Նիկողոսեան
անմիջապէս խօսք առնելով իւր սո-
վորական կողմի ոճով հերքած է այդ
կարծիքն , եւ պարզած է այնպիսի տե-
սութիւններ որք նոյն օրը խորին կեր-
պով յուզած են բոլոր ունկնդիրներն :
Այդ տեսութիւններն անտարակոյս
լաւ տպաւորութիւն պիտի թողուն
Մաթի ընթերցողաց վրայ :

Խօսքը Պ. Նիկողոսեանին է :

Այն ո՞վ էր որ ասկից քիչ առաջ ասեց թէ
« Անին անգամ չը կարողացաւ յարատեւել
դպրոցներ չունենալու պատճառաւ » : Անին
կործանվեց դպրոցներէ՞ պակասութիւնից .
հասկա՞ որ հրաշքով կերտվեցաւ այդպիսի
մի հոյսէն քաղաք ո՞ր եւ է 150-200 տա-
րիների ընթացքում , մի քաղաք որով կա-
րող էր պարծենալ այսօր իւրաքանչիւր եւ-
րոպական պետութիւն եթէ ունենար նո-
րան իր մայրաքաղաք : Իսկ դուք գիտէք ,
որ այդպիսի քաղաքներ մեր դարերում
իսկ երեւան չեն գալիս մէկ կամ երկու
դարերի մէջ , այլ մի շարք նաեւ տասնեակ
դարերի :

Եթէ Անին դիւրութեամբ հասաւ իր
օրհասականին դպրոցների նուազութիւնից ,
կը հարցնեմ կրկին՝ հասա՞ որ միջակայն ու-
ժելով կանգնեցաւ նա , այդչափ առատու-
րական արագութեամբ : Անին դպրոցներ
չ'ունենալուց ընկա՞ւ , հասա՞ ի՞նչ դիւթա-
կան միջոցներով եւ արագութեամբ յա-

